ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Մասն Բ, կազմեց Լ. Ս. ԽԱՉԻԿՅԱՆ, Հայկ. ՍՍՌ ԳԱ Հրատարակչություն, Երևան, 1958, 600 էջ:

Լ. Խաչիկյանի «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» մեծածավալ աշխատության Բ մասը նույն հեղինակի «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններին» և «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններին» Ա մասի օրգանական շարունակությունն է։ Գրախոսվող հատորը բովանդակում է 1451—1480 թվականներին գրված 575 ձեռագրերի հիշատակարաններ, որոնց բովանդակությունը մեծ արժեք է ներկայացնում Հայաստանի և հարևան երկրների ինչպես քաղաքական, այնպես նաև սոցիալ-տնտեսական պատմության ուսումնասիրության համար։

Հանրահայտ փաստ է, որ մի տասնամյակ սրանից առաջ XV դարի հայ ժողովրդի պատմության վերաբերյալ հրապարակի վրա եղած նյութերը շատ աղքատիկ էին, և հայագետները այդ շրջանի մասին սեղմ և ընդհանուր դատողություններից այն կողմ չէին կարող անցնել։ Իրավացի էր Հ. Մանանդյանը, երբ պնդում էր, որ հիշյալ ժամանակաշրջանի պատմության գիտական լրիվ ուսումնասիրությունը հնարավոր կդառնա միայն այն ժամանակ, երբ հրապարակ կգան դեռևս չհրատարակված հայ և օտար աղբյուրները, որոնց թվում նա ընդգծում էր հայերեն ձեռագրերի հիշատակարանները։ Ուրախությամբ պետք է նշել, որ այդ աշխատանքը մեզ մոտ սկսվել է և նորմալ կերպով առաջ է ընթանում։ Արդեն լույս են տեսել Վ. Հակոբյանի «Մանր ժամանակագրություններին» (XIII—XVIII դդ.) երկու ստվար հատորները, «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը» մատենաշարի «Հրովարտակներ» շարքի Ա և Բ պրակները և Լ. Խաչիկյանի «Հայերեն ձեռագրերի հիշատակարանների» երեք ստվարածավալ հատորները։

* * *

Եթե գրախոսվող գրքի մասին դատելու լինենք ելնելով սոսկ նրա վերնագրից, ապա պետք է կարծել, որ մենք գործ ունենք միայն 1451—1480 թթ. հայերեն ձեռագրերի հիշատակարանների մի ժողովածուի հետ։ Սակայն իրականում գիրքն ընդգրկում է ոչ միայն հիշյալ 30 տարվա հայերեն ձեռագրերի բոլոր հիշատակարանները, այլև նրան կցված 143 էջից բաղկացած մի ընդարձակ առաջաբան, որը իրավամբ համարվում է XV դարի երկրորդ կեսի պատմությանը նվիրված խիստ արժեքավոր մենագրություն՝ գրված ինչպես հիշատակարանների, այնպես էլ տպագիր և անտիպ այլ աղբյուրների ընձեռած փաստական հարուստ նյութի հիման վրա։ Այս առաջաբանը XV դարի հիշատակարանների Ա մասին կցված առաջաբանի հետ միասին ամբողջացնում է XV դարի քաղաքական և տնտեսական պատմությունը, հանդիսանալով XV դարի պատմությանը նվիրված միակ լուրջ գիտական ուսումնասիրությունը։

Քանի որ հիշատակարանների գիտական հրատարակության սկզբունքները Լ. Խաչիկյանի հրատարակած նախորդ հատորներից արդեն ծանոթ են և դրանց մասին նախորդ գրախոսողները արդեն խոսել են և վեր հանել դրանց բանասիրական ու աղբյուրագիտական առավելությունները։, ուստի մենք ավելորդ ենք համարում այստեղ կրկին անդրադառնալ այդ հարցերին։ Մենք կփորձենք միայն կանգ առնել հիշյալ առաջաբանի և հատորին կից հարուստ գիտական ապարատի վրա։

XV դարի երկրորդ կեսի պատմությանը նվիրված այս ընդարձակ «ներածությունը», որ հեղինակի կողմից համեստորեն անվանված է «Համառոտ ակնարկ», բաղկացած է երկու մասից, որոնցից առաջինում քննության է առնված բաղաքական պատմությունը, իսկ երկրորդում շատ ավելի մանրամասն ուսումնասիրության են ենթարկված երկրի ներքին կյանքի հետ կապված բազմաթիվ հարցեր։

Խնդրո առարկա ժամանակաշրջանի քաղաքական անցուդարձերի պատմությունը Հայաստանում բնորոշվում է այն անդադար պայքարով, որ տեղի էր ունենում թուրքմենական երկու ազգակից ցեղերի՝ աղ-կոյունլուների և կարա-կոյունլուների միջև։ Այդ երկու ցեղերը հաստատվել էին Եփրատի ու Տիգրիսի վերին հոսանքում, դեռևս XIII դարում։ XV դարի սկզբներում, Լանկ-Թեմուրի արշավանքներից հետո նրանք սկսեցին ակտիվ գործունեություն ծավա-

Տե՛ս Վ. Հ ա կ ո բ յ ա ն. ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանները։ Հայկ. ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», հաս. գիտ., 1951, № 3, Հ. Փ ա փ ա զ յ ա ն, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների Ա հատորը։ Հայկ. ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», հաս. գիտ., 1954, № 10։

լել Փոքր Ասիայում։ Նրանց միջև պայքարը սկսվել էր դեռևս XV դարի 30-ական թվականներից և դրա հիմնական նպատակը ամբողջ Հայաստանի վրա տիրապետության հաստատումն էր։ Փոփոխական հաջողություններով այդ պայքարը տևեց մինչև 1468 թվականը և ավարտվեց Աղ-կոյունլու Ուզուն Հասանի Մարանդի մոտ տարած հաղթանակով։

Այդ երկարատև պատերազմների ժամանակ ոտնատակ էր գնում աշխատավոր հայ ժողովուրդը, կոտորվում, կողոպտվում, գաղթի մատնվում. այդ մասին կան սրտաճմլիկ նկարագրություններ ականատես գրիչների թողած հիշատակարաններում։ Սակայն աղ-կոյունլուների տիրապետության շրջանին ևս բնորոշ էին հաճախակի բնդհարումները հարևան երկրների և հատկապես օսմանյան Թուրքիայի հետ։ Ուզուն Հասանից և հատկապես նրա որդի Յաղուբ փադիշահից հետո աղ-կոյունլուների պետությունը բզկտվում էր ներքին գահակալական կռիվներից, և երկիրը փաստորեն մատնված էր անիշխանության։ Դեռևս Յաղուբ փադիշահի օրոք արդեն չափազանց ծանրացած էր ազգաբնակչության վիճակը։ Հիշատակագիրները նրան անվանում են «այր ժանտ և անօրէն, անգութ և անողորմ, հալածիչ քրիստոնէից», որ «խափանեաց ի քրիստոնէից թամբով ձի հեծնել, զենչումն ժամուց և զանգակաց, զզենմունս, և զսպիտակ գօտի առանց կապուտի, և այլ բազում չարիս արարս» (Առաջաբան, էջ XXXVIII)։ Նա փորձում էր նաև բռնի մահմեդականացնել Սյունիքում և Այրարատում դեռևս իրենց գոյությունը պահպանող հայ ֆեոդալներին. «Յայսմ ամի (1488) ասված է մի հիշատակարանում,— Խ (40) ազատորդի կալան թէ տաճկացէք. այլ ողորմածն աստուած ձեռնտու և աւգնական եղև նոցա... որ է (7) ամիս կալուլական կացին և բազում տուգանք տվին և ի հաւատոցն Քրիստոսի ոչ դարձան» (նույն տեղում)։

1480-ական թվականներից սկսած օսմանցի թուրքերի և եգիպտական գորքերի միջև մղվող պատերազմները իրենց հերթին ոտնատակ էին անում օսմանցիների կողմից գրավված հայկական շրջանները և Թուրքիայի հայաշատ քաղաքների բնակչությանը։

Առանձնապես աղետաբեր էին Արգաբիլում հաստատված Սեֆյան շեյխերի կազմակերպած կրզբլրաշ մուրիդների սիստեմատիկ արշավանքները դեպի Դաղստան և Վրաստան, որոնց ժամանակ ավերվում և կողոպտվում էին ենթարկվում Հյուսիսային Ադրբեջանի ու Վրաստանի գյուղերն ու քաղաքները։ «Եւ զամենեսեան,— ասված է մի հիշատակարանում,— որ ի ձեռն էած (Շեյխն-Հայդար) ի քրիստոնէից և ի տաճկաց զարս և զկանայս սրով կոտորեաց և զքաղաքն ամենայն (Շիրվանը) հրով այրեաց կումաշօքն և որ ինչ էր ի նմա։... Եւ զանասունս ամենայն զձի և զջորի, զուխտ և զոչխար սրով կոտորեաց, և այնպէս ոչ խնայեաց ի մարդ և յանասուն» (էջ XXXVII)։

Ինչպես այս հատորում, այնպես նաև «ԺԵ դարի հիշատակարանների» Ա մասում, ընդգրկված մեծ թվով հիշատակարանները կարևոր սկզբնաղբյուրներ են նաև հարևան Վրաստանի պատմության համար։ Ստեփանոս Չմշկածագեցի բանաստեղծ հիշատակագիրը, Մելիքսեթ գրիչը և շատ ուրիշներ վառ գծերով նկարագրում են այն կողոպտիչ արշավանքները, որ կատարել է Ուզուն Հասանը իր հրոսակախմբերով Վրաստանի շրջաններում, հատկապես Թբիլիսիում և Գորիում (էջ 394—395, 415)։

Ներկա հատորի, ինչպես նաև Ա հատորի առաջաբանում Լ. Խաչիկյանը ի մի է բերել XV դարի քաղաքական պատմությանը վերաբերող հիշատակարանային բազմաթիվ կարևոր տվյալներ, որոնք, ոչ պակաս դեպքերին ժամանակակից, ականատես և ականջալուր գրիչների ճշմարտապատում արձանագրություններ, մեծ չափով օգնում են ճշտելու թուրքմենական դինաստիաների տիրապետության շրջանի ժամանակագրական մութ և վիճելի շատ հարցեր։ Պետք է ասել, որ արևելագիտությանը հետաքրքրող պատմական կարևոր ժամանակաշրջաններից մեկը հանդիսանում է հենց ԺԵ դարի թուրքմենական դինաստիաների տիրապետության ժամանակաշրջանը։ Այդ շրջանի քաղաքական պատմությանն ու ժամանակագրական որոշ հարցերի լուսաբանմանն են նվիրված նշանավոր արևելագետ Վ. Մինորսկու „Turkmenica" հոդվածաշարքի մեջ մտնող տասից ավելի հոդվածները։ Եթե իլխանության և սեֆիների տիրապետության շրջանը հայտնի է պարսկալեզու անվանի պալատական պատմիչներով, ապա կարա-կոյունլուների և աղ-կոյունլուների շրջանը այս տեսակետից գրավում է ամենահետին տեղերից մեկը։ Այս շրջանը չունի Աթամելիք Ջուվեյնիի կամ Ռաշիդ ադ-դինի, Հասան բեկ Ռումլուի կամ Իսքանդար Մունշիի նման պատմագրության հսկաներ։ Եղած մի քանի խոշոր պատմագրական երկերը (Մաթլա'-ուս-սաադեյն, Ռովզաթ-ուս-սաֆա, Հաբիբ-ուս-սիար և այլն) ստեղծված են հարևան մյուս մուսուլմանական թագավորների արքունիքներում և հիմնականում նվիրված լինելով իրենց երկրների պատմությանը, հիշյալ թուրքմենական տերությունների պատմությանը անդրադարձել են միայն այնքանով, որքանով որ այն կարող էր վերաբերել երկու պետությունների փոխադարձ հարաբերություններին։

Պարզ է ուրեմն, որ նշված ժամանակաշրջանի պատմական սկզբնաղբյուրները սահմանափակվում են միայն մեծ ու փոքր ժամանակագրություններով և հիշատակագրություններով, որոնց մեջ բավական կարևոր տեղ են գրավում հայերեն ձեռագրերի հիշատակարանները։

Ակներև է սակայն, որ հիշատակարանները առավել անմիջական նշանակություն ունեն Հայաստանի և հարևան երկրների հայաշատ կենտրոնների ներքին կյանքի ուսումնասիրության և հատկապես տնտեսության ու կուլտուրայի մասին ավելի պարզ պատկերացում կազմելու համար։ Այդ համոզիչ կերպով ապացուցված է գրախոսվող գրքի «Ներածական» մասում, որտեղ միանգամայն նոր տվյալների հիման վրա Լ. Խաչիկյանը բազմակողմանի ուսումնասիրության է ենթարկել Հայաստանի ներքին կյանքին վերաբերող մի շարք կարևոր հարցեր։

Այստեղ մենք գտնում ենք Հայաստանի տերիտորիայի վրա գոյություն ունեցող մանր իշխանությունների շարադրված պատմությունը, որտեղ լայնորեն պարզաբանված են նաև այդ իշխանությունների փոխհարաբերությունները կարա-կոյունլուների և աղ-կոյունլուների հետ։ Հատկապես կարևոր են ինչպես Բաղեշի, այնպես նաև Խիզանի, Ռստանի, Հազոյի, Սասունի, Ջերմուկի, Սպարկերտի, Բալուի, Մժնկերտի և Հարավային Հայաստանի այլ վայրերի քրդական ամիրությունների մասին հաղորդվող նոր տեղեկությունները, որոնք ուսումնասիրողին բերել են այն ճիշտ եզրակացությանը, որ «տարբերվելով Հարավային Հայաստանում գոյություն ունեցող քրդական կիսանկախ ամիրություններից, որոնք ժառանգաբար կառավարվում էին տեղական քուրդ ամիրների դինաստիաներով, Հայաստանի մյուս մասերում թուրքմենական քոչվոր ավազակներից ի ոչ մեկը չկարողացավ կայուն տիրապետություն հաստատել»(էջ LIX-LX)։ Հիշատակարանների տվյալները թույլ են տալիս հաստատապես պնդելու, որ Հարավային Հայաստանի քրդական ամիրությունների ու թուրքմենական «կոմենդանտություններ»ի բնակչության մեջ գերակշռում էր հայ էթնիկական տարրը և որ հայ խոշոր առևտրականներն ու վաշխառուները վարչական ու հարկային տեղական ատյաններում կարևոր պաշտոններ էին գրավում, քուրդ ու թուրքմեն ցեղապետների հետ միասին անխնա շահագործման ենթարկելով հայ աշխատավոր գյուղացիությանը։

Հատորն ընդգրկում է նաև զգալի թվով հիշատակարաններ, որոնք պարունակում են արժեքավոր տվյալներ Հայաստանի զանազան մասերում դեռևս իրենց գոյությունը պահպանող հայ ֆեոդալական տների մասին։ Հայտնի է, որ մահմեդական իշխանավորները հալածելով հայ ֆեոդալական տների վերջին ներկայացուցիչներին, որոշ չափով հովանավորում էին վանական հաստատությունները, համեմատաբար արտոնյալ վիճակ ստեղծելով հայ հոգևոր ֆեոդալականության համար։ Այդ էր պատճառը, որ հայ աշխարհիկ ֆեոդալականության վերջին շառավիղներից շատերը սեփական կալվածները հափշտակումից փրկելու համար ստիպված էին լինում իրենց «պատվարել վանական կալվածատիրության ցուցանակներով» (էջ LXII)։ Հոդևորական սքեմի մեջ պարուրված այս ֆեոդալական տները, լինելով հայ ժողովրդի անկախ գոյության վերջին հիշատակները, սնում էին աղատագրական պայքարի գաղափարներ ու որոշակի դեր էին խաղում ժողովրդի կուլտուրական տրադիցիաների պահպանման ու զարգացման գործում։ Դրանցից էին Էջմիածնի, Գանձասարի, Աղթամարի կաթողիկոսությունները, Վայոց ձորի Պռոշյանների ֆեոդալական տունը, Սյունիքի Օրբելյան ֆեոդալական տունը, Արցախի Հասան-Ջալալյան և Դուքյան ֆեոդալական տները, Գառնիի շրջակայքի գյուղերին տիրող և իրենց Գրիգոր Պահլավունուց սերված համարող իշխանների տունը, Լոռվա հայկական իշխանությունը և շատ ուրիշներ։

Առաջաբանում ի մի են բերված հիշատակարանային միանգամայն նոր նյութեր այդ վանական հաստատությունների, նրանց կալվածքների, անտեսության, եկամտի աղբյուրների, երկրի կուլտուրական կյանքում կատարած դերի մասին։ Դան նաև տվյալներ բազմաթիվ վանքերի վերաշինության ու կառուցման վերաբերյալ։ Այդ տեսակետից մեծ արժեք է ներկայացնում առաջին անգամ սույն հատորում հրատարակվող Զարարիա կաթողիկոսի կոնդակը, որը հրապարակվել է Այրարատյան գավառում կատարված շինարարության կապակցությամբ (էջ 173—174)։

Հանրագումարի բերելով ձեռքի տակ եղած բոլոր փաստերը Լ. Խաչիկյանը ցույց է տալիս, թե ինչպես վանքերն ու եկեղեցիները նվիրատվությունների, «մեղաց գնի» գանձման, գնումների, բանաձրանքը շահույթի աղբյուր դարձնելու, իշխողների բռնություններից ու կամայականություններից այլ երկրներ գաղթող դյուղացիների անշարժ ունեցվածքի սեփականացման, առևտրի և բազմապիսի այլ միջոցներով ընդարձակում էին իրենց շարժական և անշարժ գույքը։

XV դարի երկրորդ կեսում, երբ փակվել էին Գլաձորի և Տաթևի նշանավոր համալսարանները, ուսումնական կյանքն այնուամենայնիվ չէր դադարել Հայաստանում։ Սեպուհ լեռան

Ավագ վանքում, ապա նրա մոտիկ գտնվող Կապոսի վանքում հիշատակարանների տվյալների համաձայն, կրթական բուռն գործունեություն էր ծավալել Հովհաննես Համշենցին, ստեղծելով աշակերտների մի մեծ խումբ, որոնք այսաեղ էին ժամանում Հայաստանից և Հայաստանից դուրս գտնվող հայաշատ այլ շրջաններից։ Հիշատակարաններում կան տեղեկություններ նաև այլ ուսումնական հաստատությունների մասին՝ Թրիլիսիի, Կոտոց անապատի, Խարբերդի մոտ գտնվող Սուր վանքի, Վայոց ձորի Բոլորաբերդ անապատի և այլն։

Բացառիկ մեծ արժեք են ներկայացնում հրատարակվող հիշատակարանները տվյալ ժամանակաշրջանում հայ աշխատավոր գյուղացու արտադրական կենցաղի և հատկապես գյուղական համայնքի հետ կապված հարցերը լուսաբանելու համար։

Հիշատակարանների և այլ փաստաթղթերի ընձեռած նյութի հիման վրա Լ. Խաչիկյանը դնում է այն եզրակացության, որ հիշյալ ժամանակաշրջանում համայնքի տնտեսական և իրավական հիմքերը դեռևս բավարար չափով ամուր էին։ Որևէ հողամասի օգտագործման իրավունքի տարման ժամանակ պահանջվում էր գյուղական համայնքի համաձայնություն։ Երբ խոսք է լինում գյուղական համայնքի մասին, ապա պետք է նշել և այն հարուստ նյութի մասին, որ ընձեռում են հիշատակարանները ազգագրագետներին՝ գերդաստանների գոյության հարցը լուսաբանելու համար։ Վերջիններս ցույց են տալիս նաև, որ ունևոր գերդաստանները հաճախ սեփականացնում էին համայնքին պատկանող հողերի մի մասի օգտագործման իրավունքը, որոնց տնօրինման գործին համայնքը իրավունք չուներ միջամտելու։

Ուշագրավ են գյուղական ընդհանուր հողատարածության (բյոֆշան) մեջ մտնող Լ. Խաչիկյանի թվարկած հետևյալ 5 կատեգորիաները. ա) հողաբաժանման ենթակա համայնքապատկան վարելահողեր, խոտհարքներ, արոտավայրեր և այլն, բ) տարբեր ճանապարհներով մասնաբոր սեփականություն («հայրենիք», «մուլք») դարձած այգիներ, պարտեզներ, վարելահողեր, գ) գյուղատերերի կողմից սեփականացված վարելահողեր, որոնք տրվում էին վարձակալման, դ) վանական հաստատություններին նվիրաբերված հողակտորներ և, վերջապես, ե) անմշակ, խոպան ու ճահճոտ հողային տարածություններ։ Ի դեպ պետք է ասել, որ նույն կատեգորիաները պրոպորցիաների որոշ տարբերությամբ պահպանված էին նաև XVI—XVII դարերում։

Ներածության այս մասը շարադրելիս Լ. Խաչիկյանը մեծ չափով օգտագործել է նաև ձեռագրերում պահպանված բազմաթիվ կալվածագրեր, որոնք XIV—XV և հետագա դարերի ագրարային հարաբերությունների պատմության համար մեծ արժեք են ներկայացնում և արժանի են առանձին հրատարակության։

Չնայած XV դարի Հայաստանի բաղաքների, արհեստագործության ու առևտրի մասին հիշատակարանները և օժանդակ այլ աղբյուրները բիչ նյութ են տալիս, այնուամենայնիվ այդ սակավ նյութի հիման վրա, ինչպես նաև օտար և հայ ճանապարհորդների ուղեգրություններից բաղած նյութերով Լ. Խաչիկյանը իր առաջարանում բավականին մանրամասն ուսումնասիրում է հայ ժողովրդի պատմության այդ բիչ լուսաբանված բնագավառը։ X դարից սկսած և բազմաթիվ հարյուրամյակներ շարունակված զանազան բռնվոր ցեղերի կողոպտիչ արշավանքները Հայաստանում, դրան հաջորդած թուրք-թաթարական ու մոնղոլական տիրապետությունը ուժեղ հարված հասցրին վաղեմի փարթամ, վաճառաշահ ու բազմամարդ բաղաքներին։ XV դարում որոշ չափով սկսեցին աշխուժանալ այն բաղաքները, որոնք ընկած էին Հայաստանի վրայով անցնող Թավրիզ-Հալեպ առևտրական ճանապարհի վրա։ Նրանցից հիշատակվում են Վանը, Արճեշը, Արծկեն, Խլաթը, Բաղեշը, Երզրնկան, Խիզանը, Մուշը, Ոստանը, Խարբերդը, Բարբերդը, Սղերդը և ուրիշներ։ Լ. Խաչիկյանը իր ուսումնասիրության մեջ կանգ է առնում ոչ միայն բուն Հայաստանի տերիտորիայի վրա զարգացող բաղաքների վրա, այլև պատմական Հայաստանի հարավ-արևմուտքի, Ադրբեջանի, Վրաստանի և Իրանի բաղաքների հայ գաղութների կյանքի վրա, ուր հայ առևտրականները ու արհեստավորները մեծ կշիռ ունեին։ Դրանցից էին Ամիդի, Հալեպի, Հրսնիբեյֆի, Շամախու, Վրաստանի սահմանագլխին գտնվող Արեշի, Ադրբեջանի, Շամբրանի, Դերբենդի շրջակայքի, Թավրիզի, Մարաղայի, Արդաբիլի, Սուլթանիայի, Թբիլիսիի, Գորիի, Ախալցիխեի և այլ բաղաքների հայկական գաղութներում։ Այստեղ հայ առևտրականները ու արհեստավորները նպաստում էին բաղաքային կյանքի զարգացմանը։ Լ. Խաչիկյանը թվարկում է վերոհիշյալ բաղաքներում առկա շուրջ 30 տարբեր արհեստներ, այդ ցանկը համարելով խիստ թերի։

Ուսումնասիրության վերջին մասը նվիրված է աղ-կոյունլուների և կարա-կոյունլուների հարկային բաղաքականությանը։ Լ. Խաչիկյանը չի բավարարվել միայն հիշատակարանների տվյալներով և որոշ վիճելի գրություններով հանդերձ, նրան հաջողվել է տալ հարկերի ու հարկապահանջության ընդհանուր պատկերը, սակայն հարկային սիստեմի և հարկերի իրաց-

ման սկզբունքների ու նորմերի հարցը դեռևս կարոտ է հետագա ուսումնասիրության։ Առարկության ենթակա է նաև հարկերի այն ստորաբաժանումն ու խմբավորումը, որն առաջարկում է Լ. Խաչիկյանը։ Ավելի ճիշտ, դա հարկերի սոսկ թվարկում է՝ համառոտ բացատրությամբ, առանց դրանց տնտեսական էության և բնույթի մեջ խորանալու։ Այսպես, առաջին անգամ, փորձ է արված պարզելու նաև որոշ հարկերի հատուցման չափերը։ Այսպես օրինակ, ամենամանրակրկիտ ուսումնասիրության հիման վրա Լ. Խաչիկյանը համոզեցուցիչ կերպով ցույց է տալիս, որ հայ հպատակներից գանձվող ամենածանր հարկը՝ գլխահարկը կամ որ նույնն է, «ջիզյան», XV դարի ընթացքում անընդհատ բարձրացել է և դարի վերջում, 1435 թ. համեմատությամբ, գանձվել է կրկնակի չափով։

Շահեկան են նաև Լ. Խաչիկյանի կատարած բավական մանրագնին ուսումնասիրություններն ու ճշտումները XV դարի դրամական սիստեմի և ժամանակ առ ժամանակ դրամի կուրսի տատանումների վերաբերյալ։

Պետք է ասել, որ ինչպես նախորդ հատորում, այս հատորում ևս կան հիշատակարանների բնագրերի վերծանման որոշ վրիպումներ, որոնք հիմնականում հետևանք են ոչ ճիշտ կետադրության կամ օտար բառերի իմաստի սխալ ընկալման։ Այսպես, օրինակ, «Լուսավորչի աջի» պատմությանը նվիրված հայտնի հիշատակարանում (էջ 174, տող 18—19) «տուեալ ձեռագիր և մտեալ դաման առնուլ հարկս յամիրայէն Բաղիշու» հատվածը պետք է լինի «տուեալ ձեռագիր և մտեալ դաման՝ առնուլ հարկս յամիրայէն Բաղիշու»։ Այսինքն Ջաբարիա կաթողիկոսը պարտավորագիր ավեց և «դամանի» [illegible] — երաշխավորության տակ մտավ կամ հանձն առավ Բաղեշի ամիրայից ստանալ հարկը և տալ Ջհանշահին, որից հետո, ինչպես ասված է հիշատակարանում, «հաւանեալ արքայն և գժխոյն եառն նմայ նշանագիր և հրաման առնել զինչ և կամիցի»։ Որ այս հատվածը սխալ է ընկալվել, այդ երևում է նաև օտար բառերի բառարանից (էջ 598), որտեղ փոխանակ բացատրելու «մտեալ դաման» խոսքը՝ հիշված է «դաման առնուլ» և ենթադրաբար բացատրված է «արդարություն խնդրել»։ Այս կարգի մի բանի այլ վրիպումներից բացի կան նաև կոպիտ տպագրական վրիպակներ, որոնք տեղի են տալիս մարի աղավաղումների, ինչպես օրինակ, էջ CXXVIII, տող 14-ում տպված է «գորաշարքեր», փոխանակ «գորաշարժերի», կամ էջ 176, տող 1, «ընդառաջ էլ գոռոզն Մահմուտ-բեկ» փոխանակ «ընդառաջ էլ գոռոզն Մահմուտ-բեկ» և այլն։

Մատենադարանի № 3756 ձեռագրի, Շմավոն Անգեղակոթցու հիշատակարանը տպագրված է երկու անգամ (հիշ. № 162 և 402, էջ 124 և 318), ըստ որում մի անգամ 1459 թ., իսկ մյուս անգամ 1471 թ. տակ, երբ Շմավոն վարդապետը վաղուց արդեն վախճանված էր։

Ինչպես նախորդ հատորից և ԺԴ դարի հիշատակարանների մի հատորյակից, այս հատորից ևս անուշադիր են մնացել որոշ հիշատակարաններ, հիշենք թեկուզ Մատենադարանի № 3759 ծաղոցի էջ 712 հիշատակարանը։ Թեև այս ձեռագրից Խաչիկյանը վերցրել է և գրախոսվող հատորում գետեղել № 258 հիշատակարանը, սակայն աչքաթող է արել մի այլ, ոչ պակաս կարևոր, հիշատակարան, որ նույնպես ըստ ժամանակագրության պետք է ընդգրկվեր այս հատորում։ Այդտեղ ի միջի այլոց ասված է. «...պակասեցաւ աչս ի լուսոյ և զաւրութիւն մարմնոյ, որ պատեաց զմեզ մեղայ հարուածն՝ մահ տարաժամն և գԴաւնի և գէրևան ջարդեաց յաւուրն Բ (20) և թող զանաւրին չարն որչափ կայր։ Ազաչեմ զձեզ զմեզ ի յաղաւթս յիշեցէք, ծնաւղաւրն մեր հանդերձ»։

Հիշյալ հատուկենտ վրիպումները անխուսափելի են նման ծավալուն տեքստաբանական բնույթի աշխատություններում։ Ուշադրությունից վրիպած հիշատակարանները հեղինակը խոստանում է հավելվածաբար հրատարակության հանձնել ԺԵ դարի հիշատակարանների Դ մասում։ Դա կլինի վերջին հատորը և կգա ամբողջացնելու այս մեծարժեք գործը, որ ընդհանրապես վերցրած կատարված է խորին պատասխանատվությամբ ու գիտական բարձր մակարդակով։

Գիտական մեծ արժեք են ներկայացնում ավելի քան 150 էջ զբաղեցնող անձնանունների, տեղանունների, առարկայական ցանկերն ու օտար բառերի բառարանը, որ ոչ միայն դյուրացնում են հատորի օգտագործումը, այլև հսկայական նյութ մատակարարում այն մասնագետներին, որոնք զբաղվում են Հայաստանի պատմական աշխարհագրությամբ, հայոց լեզվի պատմությամբ և որ գլխավորն է՝ հայոց անձնանուններով։ Միայն «Հովհաննես» անունը կրող 400 անձնավորություն է հիշված, որոնցից նշանավորների մասին, ինչպես ընդհանրապես, տրված են համառոտ, բայց կարևոր բացատրություններ։

Դատվածից դուրս է, որ «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների» այս Ե հատորը, Ա հատորի և «ԺԴ դարի հիշատակարանների» մի հատորյակի հետ միասին իրենց արժանի տեղն ունեն հայկական միջնադարյան սկզբնաղբյուրների շարքում։ Սակայն, ինչպես

արդեն նշեցինք, այս և նախորդ հատորի գլխավոր արժանիքը նաև այն է, որ դրանք ոչ միայն անգնահատելի նյութ են տալիս հայագետին հետագա ուսումնասիրությունների համար, այլև իրենց կցված ընդարձակ «առաջաբաններով», որոնք դուրս են գալիս սովորական առաջաբանի սահմաններից, հանդիսանում են XV դարի պատմությանը նվիրված նախընթաց չունեցող արժեքավոր ուսումնասիրություններ, մի ավելորդ անգամ ընդգծելով նրանց հեղինակի գիտական խորը հմտությունն ու բարեխղճությունը նման դժվարին աշխատանքի կատարման մեջ։

Հ. ՓԱՓԱԶՅԱՆ

Հ. ԲԱՐԹԻԿՅԱՆ